

Յովհաննէս Վ. Թորոսեան, «Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստիոյ» (հատվածներ)
Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1932թ

Անոր ծնողական տունը կը գտնուէր Հողդար թաղին կամ արուրաձանին մէջ, քաղաքին շրջապատէն դուրս: Մինչեւ հիմակ կը ցուցուի աւանդութեամբ այն տունը, ուր ծնուած է Մխիթար, Հողդարի պատկերին մէջ տեսնուած խաչանշան տունն է: Հողդարի արուրաձանին մէջ, Մխիթար Աբբահոր տանը մոտ, ժամանակաւ կար եկեղեցի մը յանուն Ս. Գեորգայ, որ հիմակ աւերակ է:


Այս աւանդութիւնը կը հաստատէ Սեբաստիոյ կաթողիկէ Հայոց ներկայ Առաջնորդ՝ Արհի. Հաճեան արքեպիսկոպոսը, լսած ըլլալով արժանահաւատ ծերունիներէ, և նոյնիսկ Հողդարացիներէ:

Իրեն կենսագիրը կը նկարագրէ մեզ զինքը. շնորհալի դիմոք, բարեկազմ մարմնով, ուժեղ, սրամիտ և կայտառ մանուկ մը, որուն շարժմանց կամ խոսից մէջ երբեք տղայական թեթեւութիւն կամ որևէ հասարակ բան մը չէր երեւէր: Ջգայուն սիրտ մը՝ միացած տոկուն կամքի մը հետ, ազնուական բնաւորութիւն մը՝ խառնուած այնպիսի հրատապ եռանդեան մը, որ ամենուն ուշը իրեն կը գրաւէր: Խաղերու սիրող չէր, տնէն դուրս հազիւ երբեք կերելէր: Հասակէն վեր լրջութիւն մը ունէր, սակաւախօս էր, իւր ամէն գործին մէջ խոհական, հանդարտ և վճռական բան մը ունէր, այնպէս որ մեծերուն վրայ իսկ պատկառանք մը կազդէր, և ամէն տեսողք կը վկայէին՝ թէ Աստուած մեծ բանի մը կը պատրաստէր զինքը:

Իրենց տանը կից էր եկեղեցին, ուր ամէն անգամ կը նկերանար ծնողաց այն փոքրիկ հասակին մէջ, խառնելու անմեղ սրտին մրմունջները շարականաց և սաղմոսաց երգերուն հետ, գորոնք միտքը պահելով, յետոյ կը կրկնէր տան մէջ փափուկ, ոլորուն ձայնով մը, և կը գորովէր լսողները:

Դեռ չի ճանչցած թէ ինչ է աշխարհ կամ կեանք, դեռ չի տեսած անոնց փուշն ու ծաղիկը, կրոնաւոր ըլլալու փափագն ունեցաւ, և այնչափ սաստիկ էր այն՝ որ չի կրցաւ սրտին մէջ ծածուկ պահել: Ծնողք առաջին լսելուն՝ պարզապէս ծիծաղեցան վրան, այնչափ տարօրինակ երեւեցաւ իրենց այդ մտածութիւնը, բայց երբ տեսան որ Մխիթար իրոք յարած էր այդ գաղափարին, յանդիմանեցին զինքն և ջանացին միտքը փոխել տալ: Նա վշտացած սաստիկ՝ ծնողաց, և մանաւանդ հորեղբարց ցուցած դիմադրութենէն, աւելի եւս հաստատուեցաւ իւր մտքին վրայ և սկսաւ ճգնութեամբք անոր պատրաստել ինքզինքը:

Դեռ ինը տարեկան չկար այն ժամանակ, երբ առաջին փորձն ըրաւ ճգնութեան, գոր յետոյ շարունակեց խոհական կերպով մինչեւ ի մահ, վարժեցնելով ինքզինքը սիրով և արիութեամբ տանելու ամէն նեղութիւն և զրկումն: Լսեց նաեւ Ս. Նշանի վանքին առաջնորդ Անանիա եպիսկոպոսն և զինքը քովը կանչելով, հազիւ իննամեայ հասակին մէջ, փոքր աստիճանները տուաւ անոր, անտարակոյս նաեւ կիսասարկաւագութեան աստիճանը, և այնուհետեւ դպիր կոչուեցաւ նա:



Մեքաստիայէն իբր տասը վայրկեան հեռու, հիւսիսային կողմը, կը գտնուի Ս. Նշանի վանքը, շինուած մեր Արծրունի Սենեքերիմ թագաւորէն 1021-ին ժամանակները, հնութեամբ և յիշատակներով հռչակաւոր, Մերեգումի լեռնոտն կազմող բարձրաւանդակին վրայ կանգնած, որ իրեն մեծ ու փոքր գմբէթներով տեսողաց աչքն առ ինքն կը ձգէ:

Շաղախով ծեփուած քարաշէն պարիսպ մը կը շրջապատէ վանքը, որուն առջեւ կը տարածուի պտղատու ծառոց ընդարձակ պարտէզը, իսկ կոնակի կողմը՝ ձեռակերտ անտառ մը ուռնեաց և կաղամախի, որում մօտ կը գտնուի Անապատ վանքը՝ նորոգուած վերջերս, և հայաբնակ Դավրա գիւղը:

Վանքին արեւելեան կողմը կը գտնուին յստակ ջրերու ինքնաբուխ աղբիւններ, որոնց մէջ նշանաւոր են երկունքն իրենց յստակութեամբ և ջրոյ յորդութեամբ, Լուսաղբիւրք կոչուած, և առուներ՝ ընդարձակ արտորէներով իբր կէս ժամ երկայնութեամբ, մինչեւ Բրգնիքի սահմանը:

Վանքն երեք եկեղեցի ունի, որոնցմէ մեծագոյնը կը կոչուի Ս. Նշան, խաչաձեւ, Վարագոյ Ս. Նշան եկեղեցոյ ճարտարապետութեամբ, բայց քան զայն աւելի փոքր: Երկրորդ եկեղեցին կը կոչուի Ս. Կարապետ, որորոցի ձեւով շինուած, գմբէթաւոր: Իսկ երրորդը՝ նոյնպէս գմբէթաւոր, փոքրիկ եկեղեցի մը խաչաձեւ, Ս. Աստուածածնի նուիրված, որուն մէջ թաղուած է վանքի արեղաներէն՝ Թեոդորոս նահատակը, Քրիստոսի 1150 թուականին:

Վանքին մէջ կեցած կը վայելէ մարդ քաղաքին տեսարանը, կը վայելէ շրջակայքին կէս վայրենի գեղեցկութիւնը, ընդարձակ հորիզոն մը, ջրարբի դաշտ մը՝ մեղմ ելեւէջներով, հովիտներ, բլուրներ, լեռներ, մտքի հետ խոսող տեսարան մը, որուն առջեւ կը մոռցուին կենաց ցաւերն, և բարձրութեանց հետ կը վերանայ առ Աստուած, -իմաստութեան և սիրոյ աղբիւրը,-սիրտ մը՝ որ անոր ծարաւով տանջուած է:

Աստուծոյ այդ ծարաւող հոգին՝ Միսիթարն էր, աչքերը դարձուած միշտ դէպ ի Ս. Նշան, որուն սրբազան լռութիւնը, որուն երկրաբերձ գմբէթները, սաստիկ հրապոյր մը ունեցեր էին անոր վերայ մանկութենէն սկսեալ, և ուր կը յուսար գտնել այն՝ զոր անդուլ երագած էր-սրբութեան և գիտութեան լայն ասպարէզ մը:

Պատանին, որ դեռ հազիւ տասնընչինգ տարեկան էր, հազաւ կրոնաւորական սքեմ և Ս. Նշան վանքի առաջնորդ Անանիա եպիսկոպոսի կողմից սարկաւազ ձեռնադրվեց: Այն օր անունը փոխուելով, Միսիթար կոչուեցաւ:



«Մերաստացի սարկաւազն Միսիթար, յայնժամ 18 ամաց, եկեալ այսր յուխտ, յամի 1692, արժանաւորեցաւ խոստման Տիրամօրն, օգնական յինելոյ աստուածասէր րդձանացն, մինչ աղերս արկանէր առաջի պատկերի նորին, որ և ցարդ պահի անդ, թէ և հնացեալ և խանգարեա, որոյ է օրինակս. և քաջալերեալ՝ յաջողեցալ նորին Տիրամօր շնորհօք հաստատել զկրօնս իւր, շինելով վանքս նախ ի Մերթն Մոռէայ, և ապա ի Վենետիկ...»: Ղևորդ Ալիշան

Մերաստացու անխոնջ ընթերցանութեան ոճը

Անոր անխոնջ ընթերցանութիւնն և ուսումնասիրելու ոճը, որոնց վրայ չեմ ուզեր բոլորովին լռութեամբ անցնիլ, կրնան օրինակ մը ըլլալ իրեն հասակակից պատանեաց: Երբ գիրք մը սկսէր կարդալ, ձեռքէ չէր թողուր, մինչեւ որ չաւարտէր ամբողջ և հասու չըլլար անոր բոլոր իմաստներուն, ոճով մը և կարգով մը կը կարդար, ոչ նման իրեն շատ հասակակիցներուն, որոնք գրքերու ստեպ փոփոխութեամբ կուզեն անցնել իրենց ձանձրույթը: Երբ խրթին բառի կամ իմաստի մը հանդիպէր, առանց քննելու չէր անցնէր և ոչ ալ երկար ժամանակ կը կենար վրան, այլ առանձին տետրի մէջ կը նշանակէր, որ յետոյ նոյն գրքին լուսաւոր տեղեաց հետ բաղդատելով հասկնար կամ գիտնական անձանց հարցնելով տեղեկանար:

Անոր ընթերցանութեան չափ չկար. ոչ միայն սենեկին մէջ, այլ նաեւ դուրսը, պարտեզին մէջ, ճանապարհորդելու ժամանակ հետիոտն կամ գրաստի վրայ, միշտ ձեռքը գիրք մը ունէր: Ոչ մէկ առարկայ կամ զբաղումն կարող չէր ցրումն պատճառել անոր կամ ետ կեցնել զինքն ընթերցումէն: Եղան օրեր՝ որ առանց ուտելու անցուց, գրքերու մէջ ընկղմած բոլորովին: Գեղեցիկ և յարմար օրինակները կամ վկայութիւնները միտքը կը պահէր, մեծ յիշողութեան տէր ըլլալով, կամ առանձին թղթիկներու վրայ կը նշանակէր, որով երբ հարկ ըլլար քարոզ տալ կամ հոգեւոր բանի մը վրայ խոսիլ, միշտ պատրաստ ունէր կարելու նյութերը: Յիշողութեան հետ՝ սուր անդրադարձութիւն մը ալ ունէր, արթուն և ըմբռնող միտք մը, որ ոչ միայն գրութեանց՝ այլ և գործերուն մէջ կերելի:

Պայմանք տղայոց ընտրութեան

Արեւելք գտնուող քարոզիչներուն գրեց որ ընտանոք փոքրահասակ տղաքներ դրկեն ի Վենետիկ, որոնք ըլլան ազնիւ, և քաղցրաբարոյ, հոգեսէրք, բարեպաշտ ընտանեաց զաւակներ, սրամիտք, ընթերցասէրք և ընդունակ ուսմանց:

Խստի պատուիրեր որ լաւ ընտրութիւն ընեն, քննեն անոնց կազմուածը՝ որ տկար և հիւանդոտ չըլլան, փորձեն զանոնք, բացատրեն թէ ինչ է կրօնաւորութիւնը, դժուարութիւններն զնեն առջեւնին, որպէս զի աւելի եւս յայտնի ըլլայ անոնց կոչում ունենալը կամ ոչ: Կը գրէր որ չընդունին ծնողաց մէկ հաստիկ զաւակները, բայց միայն եթէ ուխտած ըլլան Աստուծոյ նուիրելու զանոնք:

Տարիքի մասին՝ ամենէն փոքր 12-ամեայ և ամենէն մեծ 16-ամեայ տղաքը կընդունէր: Դարձեալ տղայոց ընդունելութեան արգելքներ էին արտաքին պակասութիւնք, ինչպէս չափազանց հասակի կարճութիւնը, շիւ և շատ խաղացող աչքերը, և այլն, չէր ընդունէր նաեւ ձառագէմները, և ուրիշ որևէ արատաւորները, վասն զի արտաքինը յաճախ ներքնոյն հայելին է, կըսէր. «Ազնիւ իւղերը հասարակ անոթներու մէջ չէն պահուիր. Մինչդեռ դիմաց չափակցութիւնը և արտաքին բարեձեւութիւնը շատ անգամ հոգւոյն գեղեցկութեան նշաններ են»:

Միւս կողմանէ կընտրէր աւելի աղքատներուն քան հարուստներուն զաւակները. «Եթէ երկու տղաք ըլլան, կը գրէր, մին աղքատ և ազնիւ, իսկ միւսը՝ հարուստ և պակասաւոր, պետք է առաջինը ընտրէք՝ քան վերջինը: Նայեցէք որ աղքատներուն որդիքը ընտրէք և որկէք, միայն թէ սրամիտ և հեզաբարոյ ըլլան, ընդհանրապէս աղքատները խոնարհ և հլու կըլլան, մինչդեռ հարուստներուն զաւակները բարձրամիտ և համարձակ կըլլան»:

Անընդունակ ընելու թերութեանց մէջ կը շեշտէր ի մասնաւորի խեռութիւնը և ստահակութիւնը, որոնցմով անսանձ և անգուսպ կըրըլան տղայք, -սեւամաղձութիւնը, որով տրտում՝ կասկածաւոր և անտանելի կը դառնան ընկերութեան մէջ, - ուսմանց անընդունակութիւնը և անհոգնութիւնը, որով տկարամիտ և ախտավոր կըլլան: Ամէն փոյթ և ջանք կընէր որ տղայք գալու և դառնալու միջոցին՝ մինակ չմնան նաւուն մէջ, և ընդհանրապէս իրեն քահանաներէն միոյն կամ ծանոթ և վստահելի անձի մը կը յանձնէր զանոնք:

Նա միշտ աշակերտաց մէջ առաւօտէն երեկոյ, կը հսկէր, կուղղէր, կը կրթէր և կուսուցանէր: Աբբահայրն անձամբ կը դասախոսէր բարձրագոյն ուսումները, հռետորութիւն, քերթողութիւն, իմաստասիրութիւն, աստուածաբանութիւն, և այլն: Այնպիսի գրաւիչ և յստակ ոչ մը ունէր դասախոսութեան, որ աշակերտաց բոլոր ուշադրութիւնը իրեն կը ձգէր:

Հոգեւոր և ուսումնական կրթութեանց հետ՝ Մխիթար չէր զլանա նաեւ կարեւոր հանգիստները և սփսփանքները կընէր իւրաքանչիւր հասակին հարմար զիջողութիւններ:

Մեքաստացու իմացական կարողությունների մասին

Մենք այնչափ զգուշութեամբ չենք ծածկեր մեր թերութիւնները, որչափ նա իրեն առաքինութիւնները: Անոր ականջին այնքան զգուելի չէր օձին սոյլը, որքան գովեստից խոսքերը. վասն զի «ինչպէս որ կրակը կըհալեցնէ մոմը, կըսէր նա, այնպէս ալ մարդկան գովութիւնները կը հալեցնեն և կոչնչացնեն բարի գործերը»: Կափշէր կմնար, թէ ինչպէ՞ս կարելի է հպարտանալ կատարելութեան մը համար, զոր Աստուած տուեր է: Ո՞վ իրմէն աւելի մեծամտելու իրաւունք ունէր, եթէ այս ներելի է, և սակայն ո՞վ իրմէն ավելի խոնարհ եղաւ:

Մխիթար, այդ իրեն խոնարհութեամբ և պարզութեամբ. գիտցաւ զամենք ալ շահիլ, և չունեցաւ թշնամի մը, որ յետոյ բարեկամ չըլլայ, և ամենէն աւելի սերտ բարեկամը: Նա՝ հակառակորդաց դէմ ուրիշ զէնք չէր գործածեր, բայց համբերութիւն և լռութիւն,

համոզուած՝ թէ «անմեղ վարուց լռութիւնը շատ աւելի գորաւոր և խոսուն է՝ քան ամէն արդարացնող շատախոս պատասխանները»:

«Խոհեմութիւնը, որ մարդկային գործերուն աչքը կը համարուի, միշտ և ամէն տեղ փայլեցավ Մխիթարայ վրայ», - կըսէ անոր կենսագիրը՝ Ստեփ. Ագոնցը:

Վախճանին յարմար միջոցները գտնելուն մէջ՝ ճարտար և աջողակ, անոնց ընտրութեան մէջ՝ ոչ վաղվադակոտ էր և ոչ դանդաղ:

Անյողդողդ և հաստատամիտ՝ իւր որոշութեանց մէջ, երագ և զգուշաւոր՝ անոնց գործադրութեան ժամանակ, և այնչափ հեռատես՝ որ առաջուց կը գուշակէր գործին ելքը:

Միջին շավիղը կը բռնէր ամէն բանի մէջ, վեհանձնութեան հետ՝ խոնարհամիտ էր, հրամայելու ժամանակ՝ համեստ և բարեշնորհ, խիստ էր՝ բայց քաղցրահամբոյր:

Խորագէտ էր՝ այլ ոչ խորամանկ, պարզ և անկեղծ, այլ ոչ անզգոյշ ու անգաղտանապահ. կիրթ և ազնիւ՝ բայց ոչ մարդահաճոյ կամ կեղծաւոր, բարեսէր և բարեմիտ, այլ որ բնաւ նուաստախոհ և ծառայամիտ:

Խոսից մէջ ճոխ և առատ, բայց ոչ սնտոխաբան. երբէք անոր բերնէն անօգուտ խոսք մը չլսուեցաւ: Համեստութեան քողին ներքեւ, ծածկած իրեն մեծամեծ գործերը, անձնագութեան ստուերէն անգամ խործելով, նախանձոտներուն սիրտը կը շահէր:

Որքան խիստ էր իւր անձին վերայ, այնքան կարեկցող ուրիշներուն տկարութեանց: Ժիր և փութաջան իրենները խնամելու մէջ, կը մոռնար իւր անձը և հանգիստը, ուրիշները հոգալու և երջանիկ ընելու համար:

Անդու և անխոնջ բարի գործերու մէջ, անընկճելի՝ ծանր դեպքերուն, արի և հնարագէտ՝ դժուարութեանց առջև, յաջողութեանց և ձախողութեանց մէջ՝ միակերպ, աննկուն, անայլայլակ, համբերող ցավու և տառապանաց մէջ:

Տրտմական բաներու մէջ՝ անվրդով, հակառակութեանց մէջ՝ անդրդուելի, կարեւոր և մեծամեծ իրաց ձեռնամուխ, ոչ անձին փառաց կամ շահուն համար, այլ առ հարկի և հասարակաց օգտին համար միայն:

Մխիթար ստեղծող միտք մէ, որ իւրովին կուռճանայ, կը ծաւալի, հսկայ կը դառնայ, երբ իրեն յարմար միջավայրը կը գտնէ: «Բարձր բաները հասկնալու մէջ՝ երագ, նուրբ խնդիրները հետազոտելու մէջ՝ խորունկ և սրատես, ճշմարտութեան խոսից խելամտութեան մէջ՝ կորովամիտ, իմաստները միտքը պահելուն մէջ՝ մեծ յիշողութեամբ օժտուած»: Այս է Մխիթարայ ծանոթից և ժամանակակցաց դատաստանը անոր իմացական կարողութեան մասին:

Ըմբռնած էր Մխիթար ընկերական կենաց օգուտները, գիտէր՝ թե միաբանութիւն մը, առանց սիրոյ և սրտերու միութեան, բանդագուշանք մէ. հարկ էր որ իրարու շփուէին մտքերը և բարքերը՝ զիրար սրբագրելու և յղկելու համար, հարկ էր որ խօսքերու և մտածութեանց առնչութիւն մըլլար, որով կապուէին հոգիները:

Այդ ծանր գործը, որ յայտնի է թէ ինչ մեծ ճարտարութիւն և շրջահայեցութիւն, որքան ընդարձակ և լուսաւոր միտք կը պահանջէ, իւր վերայ առաւ Մխիթար, երբ դեռ հազիւ քսանուվեց տարեկան երիտասարդ մէր:

Կը փայլին Մխիթարայ գործերուն մէջ հաւասարապէս արիութիւն և խոհեմութիւն, երկու ամենակարևոր առաքինութիւնք ո և է առաջնորդի մը, որոնք եթէ իրենց սահմանին մէջ չի մնան, կամ՝ ի յանդգնութիւն կը տանին կամ երկչոտութեան մէջ կը ձգեն զմարդ:

Պետք չէ երբեք շփոթել խոնարհությունը նուաստության հետ: Այդ հոգին ունէր և Մխիթար: Նա, որ չափազանց ներողամիտ էր անձին դէմ եղած հակառակությանց և թշնամանաց, չէր կրնար հանդուրժէր Աստուծոյ կամ կրօնքին դէմ եղած անարգանաց, ինչպէս նաեւ միաբանության հասուցած բարոյական կամ նիւթական վնասուց: Եւ Մխիթար ամէն ժամանակ և ամենուն հետ նոյն կերպով չէր վարուէր. գիտէր նա, իրեն մանկական պարզութեան և անկեղծութեան հետ, ըլլալ նաեւ խորագէտ և ձեռներէց, որքան թոյլ կու տայ քրիտոնէական հոգին, մանաւանդ երբ գործը խորամանկներու հետ էր, անոնց ծուղակին մէջ չինկնալու և իրեն դիմաց ելած արգելքները վերցնելու համար:

Աբբահայրն անձամբ կը դասախոսէր բարձրագոյն ուսումները, հռետորութիւն, քերթողութիւն, իմաստասիրութիւն, աստուածաբանութիւն, և այլն: Այնպիսի գրաւիչ և յստակ ոչ մը ունէր դասախոսութեան, որ աշակերտաց բոլոր ուշադրութիւնը իրեն կը ձգէր:

Նա միշտ աշակերտաց մէջ առաւօտէն երեկոյ, կը հսկէր, կուղղէր, կը կրթէր և կուսուցանէր: Հոգեւոր և ուսումնական կրթութեանց հետ՝ Մխիթար չէր զլանա նաեւ կարեւոր հանգիստները և սփսփանքները կընէր իւրաքանչիւր հասակին հարմար զիջողութիւններ:

Մխիթար ամէն խոսքի, ամէն գրութեան, ամէն դէպքի մէջ, ամէն ժամանակ սէր կը քարոզէր և կը շնչէր, և ինքն՝ ըսածին և գրածին օրինակը կու տար:

Մուտքագրեց Նունե Մովսիսյանը